

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԽՈՐՀՐԴԻ 2009 թվականի մայիսի 25-ի 2009/50/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

**Բարձր որակավորում պահանջող աշխատանքի նպատակով երրորդ երկրների քաղաքացիների  
մուտքի եւ բնակության/կացության պայմանների մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը, եւ,  
մասնավորապես՝ դրա 63-րդ հոդվածի առաջին ենթապարբերության 3(ա) եւ 4-րդ կետերը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը,<sup>1</sup>

Տնտեսական եւ սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,<sup>2</sup>

Տարածաշրջանային կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,<sup>3</sup>

Քանի որ՝

- 1) աստիճանաբար ազատության, անվտանգության եւ արդարադատության տարածք ստեղծելու համար Պայմանագրով նախատեսվում է ապաստանի, ներգաղթի, երրորդ երկրի քաղաքացիների իրավունքների պաշտպանության ոլորտներում միջոցների ընդունում:
- 2) պայմանագրով նախատեսվում է, որ Խորհուրդը պետք է ընդունի միջոցներ՝ մուտքի եւ բնակության/կացության պայմանների, անդամ պետությունների կողմից երկարաժամկետ վիզաներ եւ բնակության/կացության թույլտվություններ տրամադրելու ընթացակարգերի չափանիշների հետ կապված ներգաղթային քաղաքականության վերաբերյալ, եւ այնպիսի իրավունքներ եւ պայմաններ սահմանող միջոցներ, որոնց համաձայն անդամ պետությունում օրինական հիմունքներով բնակվող երրորդ երկրների քաղաքացիները կարող են բնակվել այլ անդամ պետություններում,
- 3) 2000 թվականի մարտին Լիսաբոնում տեղի ունեցած Եվրոպական խորհրդի նիստի ընթացքում Համայնքի առջեւ նպատակ է դրվել մինչեւ 2010 թվականը դառնալ

<sup>1</sup> 2008 թվականի նոյեմբերի 20-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

<sup>2</sup> 2008 թվականի հուլիսի 9-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

<sup>3</sup> 2008 թվականի հունիսի 18-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

աշխարհում ամենամրցունակ եւ գիտելիքահեն դինամիկ տնտեսությունը՝ ավելի լավ աշխատատեղերով, սոցիալական ավելի մեծ համախմբվածությամբ եւ տնտեսական կայուն աճի հնարավորությամբ: : Անդամ պետությունների կարիքների վրա հիմնված մոտեցման շրջանակում երրորդ երկրներից բարձր որակավորում ունեցող աշխատողներ ներգրավելուն եւ վարձելուն ուղղված միջոցները պետք է դիտարկվեն Լիսաբոնյան ռազմավարությամբ եւ Հանձնաժողովի՝ զարգացման եւ աշխատատեղերի վերաբերյալ միասնական ուղեցույցների մասին 2007 թվականի դեկտեմբերի 11-ի հաղորդագրությամբ սահմանված ընդարձակ համատեքստում,

- 4) Եվրոպական խորհրդի կողմից 2004 թվականի նոյեմբերի 4-ին եւ 5-ին ընդունված Հաագայի ծրագրով ճանաչվել է, որ օրինական միգրացիան կարելու է խաղալու Եվրոպայում գիտելիքահեն տնտեսության աճի, տնտեսական զարգացման խթանման հարցերում՝ այդպիսով նպաստելով Լիսաբոնյան ռազմավարության իրականացմանը: Եվրոպական խորհուրդը Հանձնաժողովին խնդրել է ներկայացնել օրինական միգրացիայի վերաբերյալ քաղաքականության ծրագիր, այդ թվում՝ ընդունման ընթացակարգեր, որոնցով հնարավոր է անմիջապես արձագանքել աշխատանքային շուկայում միգրանտ աշխատողների դեպքում գործող փոփոխվող պահանջներին,
- 5) 2006 թվականի դեկտեմբերի 14-ին եւ 15-ին Եվրոպական խորհուրդը համաձայնության եկավ 2007 թվականի համար նախատեսված քայլերի շուրջ՝ դրանց շրջանակներում արդյունավետ կառավարվող օրինական ներգաղթային քաղաքականություններ մշակելու, աշխատանքի համար անհրաժեշտ առկա եւ հետագա կարիքները բավարարելու հարցում անդամ պետություններին աջակցելու համար՝ ամբողջովին պահպանելով ազգային իրավասությունները,
- 6) Լիսաբոնյան ռազմավարության նպատակներին հասնելու համար կարելու է նաեւ Միության շրջանակներում խթանել բարձր որակավորում ունեցող այն աշխատողների շարժունակությունը, որոնք Միության քաղաքացիներ են, մասնավորապես նրանց, ովքեր 2004 եւ 2007 թվականներին անդամակցած անդամ պետություններից են: Սույն Հրահանգը կիրարկելիս անդամ պետությունները պարտավոր են պահպանել, մասնավորապես, 2003 եւ 2005 թվականների «Անդամակցության մասին» ակտերի համապատասխան դրույթներում նշված Համայնքի նախապատվության սկզբունքը,

7) սույն Հրահանգի նպատակն է բարձր որակավորում պահանջող աշխատանքի նպատակով երկրում ավելի քան երեք ամիս գտնվելու համար երրորդ երկրի քաղաքացիների ընդունումն ու շարժունակությունը խթանելով նպաստել այս նպատակների իրականացմանը եւ աշխատուժի պակասի լրացմանը՝ Համայնքը աշխարհի տարբեր կողմերից եկող նման աշխատողների համար ավելի գրավիչ դարձնելու, Համայնքի մրցունակությունն ու տնտեսական աճը պահպանելու համար: Այս նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է դյուրացնել բարձր որակավորում ունեցող աշխատողների եւ նրանց ընտանիքների ընդունման գործընթացը՝ սահմանելով ընդունման արագացված ընթացակարգ եւ նրանց տալով սոցիալական եւ տնտեսական նույն իրավունքները, որպիսիք ունեն մի շարք տարածաշրջանների հյուրընկալող անդամ պետությունների քաղաքացիները: Անհրաժեշտ է նաեւ հաշվի առնել անդամ պետությունների առաջնահերթությունները, աշխատանքային շուկայի կարիքները եւ ընդունման հնարավորությունները: Սույն Հրահանգը չպետք է սահմանափակի աշխատանքի ցանկացած նպատակով անդամ պետությունների՝ ազգային մակարդակով տրվող բնակության/կացության նոր թույլտվությունները պահպանելու կամ ներկայացնելու իրավասությունը: Երրորդ երկրի համապատասխան քաղաքացիները պետք է հնարավորություն ունենան դիմելու ԵՄ Կապույտ քարտի կամ ազգային մակարդակով տրվող բնակության/կացության թույլտվության համար: Ավելին, սույն Հրահանգը չպետք է ազդեցություն ունենա ԵՄ կապույտ քարտի սեփականատերերի՝ լրացուցիչ այն իրավունքներից եւ նպաստներից օգտվելու հնարավորության վրա , որոնք կարող են նախատեսվել ազգային իրավունքով եւ որոնք համապատասխանում են սույն Հրահանգին,

8) սույն Հրահանգով չպետք է սահմանափակի անդամ պետությունների՝ բարձր որակավորում պահանջող աշխատանքի նպատակով իրենց տարածք մուտք գործող երրորդ երկրի քաղաքացիների ընդունման թիվը որոշելու իրավունքը: Սա պետք է ներառի նաեւ երրորդ երկրի այն քաղաքացիներին, որոնք վճարվող տնտեսական գործունեություն ծավալելու նպատակով փորձում են մնալ անդամ պետության տարածքում եւ որոնք օրինական հիմունքներով բնակվում են անդամ պետությունում այլ ծրագրերով, ինչպես օրինակ, նորավարտ ուսանողները կամ գիտահետազոտական աշխատանքներ կատարողները, որոնք ընդունվել են համապատասխանաբար «Ուսման, աշակերտների փոխանակման, առանց վարձատրության վերապատրաստման կամ

կամավոր աշխատանքի նպատակով երրորդ երկրի քաղաքացիների ընդունման պայմանների մասին» Խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 13-ի 2004/114/ԵՀ հրահանգի<sup>1</sup> եւ «Գիտահետազոտական աշխատանքների կատարման նպատակով երրորդ երկրի քաղաքացիների ընդունման հատուկ ընթացակարգի մասին» Խորհրդի 2005 թվականի հոկտեմբերի 12-ի 2005/71/ԵՀ հրահանգի<sup>2</sup> համաձայն, եւ որոնց վրա համայնքային կամ ազգային իրավունքի համաձայն չի տարածվում անդամ պետության աշխատանքային շուկայից հաստատուն կերպով օգտվելու հնարավորությունը: Ավելին, հաշվի առնելով ընդունման թվերը՝ անդամ պետությունները պահպանում են բնակչության/կացության թույլտվություններ չտալու հնարավորությունը՝ ընդհանուր առմամբ աշխատանքի կամ որոշ մասնագիտությունների, տնտեսական ոլորտների կամ տարածաշրջանների համար,

9) սույն Հրահանգի նպատակով գնահատելու համար՝ արդյոք երրորդ երկրի տվյալ քաղաքացին ունի բարձրագույն կրթության որակավորումներ, թե ոչ, հղում կարող է կատարվել 1997 թվականի Կրթության միջազգային ստանդարտ դասակարգման 5(ա) եւ 6-րդ մակարդակներին,

10) սույն Հրահանգով պետք է նախատեսվի պահանջարկով պայմանավորված մուտքի ճկուն համակարգ՝ հիմնված օբյեկտիվ չափորոշիչների, ինչպիսիք կարող են լինել նվազագույն աշխատավարձի շեմը՝ համեմատած անդամ պետություններում աշխատավարձի մակարդակների հետ, ինչպես նաեւ մասնագիտական որակավորումների վրա: Աշխատավարձի շեմի համար ընդհանուր նվազագույն համարիչի սահմանումն անհրաժեշտ է ամբողջ Համայնքով ընդունման պայմանների ներդաշնակեցման նվազագույն մակարդակն ապահովելու համար: Աշխատավարձի շեմով որոշվում է նվազագույն մակարդակ, մինչդեռ անդամ պետությունները կարող են սահմանել ավելի բարձր աշխատավարձի շեմ: Անդամ պետությունները պետք է սահմանեն իրենց շեմը՝ իրենց համապատասխան աշխատանքային շուկաների վիճակի ու կազմակերպման եւ իրենց ներգաղթային ընդհանուր քաղաքականությունների համաձայն, Կոնկրետ մասնագիտությունների դեպքում աշխատավարձերի շեմի հետ կապված կարող են շեղումներ սահմանվել այն դեպքում, երբ տվյալ անդամ պետությունը գտնում է, որ աշխատուժի որոշակի պակաս կա եւ որ այդ մասնագիտությունները պատկանում են

<sup>1</sup> ՊՏ L 375, 23.12.2004 թ., էջ 12:

<sup>2</sup> ՊՏ L 289, 03.11.2005 թ., էջ 15:

Զբաղմունքների միջազգային ստանդարտ դասակարգման (ISCO) 1-ին եւ 2-րդ հիմնական խմբերին,

- 11) սույն Հրահանգի նպատակն է ԵՄ կապույտ քարտ համակարգի շրջանակներում միայն սահմանել բարձր որակավորում պահանջող աշխատանքի նպատակով երրորդ երկրի քաղաքացիների մուտքի եւ բնակության/կացության պայմաններ՝ ներառյալ աշխատավարձի շեմի հետ կապված համապատասխանելիության չափորոշիչները: Աշխատավարձի այս շեմի միակ նպատակն է օգնել որոշել ընդհանուր կանոնների հիման վրա անդամ պետության կողմից սահմանված ԵՄ կապույտ Քարտի գործողության ոլորտը՝ հաշվի առնելով Հանձնաժողովի (Եվրոստատ) կողմից կամ համապատասխան անդամ պետության կողմից հրապարակված վիճակագրական հետազոտությունների արդյունքները: Այն նպատակ չունի որոշել աշխատավարձերը եւ հետեւաբար չի շեղվում անդամ պետության մակարդակով սահմանված կանոններից եւ գործելակերպերից կամ կոլեկտիվ պայմանագրերից եւ չի կարող օգտագործվել այս ոլորտում ցանկացած ներդաշնակեցման համար: Սույն Հրահանգով ամբողջությամբ պահպանվում են անդամ պետությունների՝, մասնավորապես, զբաղվածության, աշխատանքային եւ սոցիալական հարցերի հետ կապված իրավասությունները,
- 12) այն բանից հետո, երբ անդամ պետությունը որոշել է ընդունել համապատասխան չափորոշիչներ իրականացնող երրորդ երկրի քաղաքացու, երրորդ երկրի այն քաղաքացին, որը դիմել է ԵՄ կապույտ քարտի համար, պետք է սույն Հրահանգով նախատեսված հատուկ կացության թույլտվություն ստանա, որը իրեն եւ իր ընտանիքի անդամներին պետք է տա աշխատանքային շուկայից օգտվելու ավելի ու ավելի մեծ հնարավորություն, մուտքի եւ բնակության/կացության ու շարժունակության իրավունքներ: ԵՄ Կապույտ քարտի համար դիմումի քննության վերջնաժամկետը չպետք է ներառի մասնագիտական որակավորումները ճանաչելու համար պահանջվող ժամանակը կամ, եթե պահանջվում է, վիզայի տրամադրման համար պահանջվող ժամանակը: Սույն Հրահանգով չեն խախտվում դիպլոմների ճանաչման մասին ազգային ընթացակարգերը: Սույն Հրահանգով, իրավասու մարմիններ նշանակելով, չեն սահմանափակվում ազգային այլ մարմինների, եւ, եթե կիրառելի է, սոցիալական գործընկերների դերն ու պարտականությունները՝ դիմումի քննության եւ դիմումի մասին որոշման համաձայն,

- 13) ԵՄ կապույտ քարտի ձեւաչափը պետք է համապատասխանի Խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի թիվ 1030/2002 (ԵՀ) կանոնակարգի պահանջներին, որով երրորդ երկրի քաղաքացիների համար սահմանվում է բնակության/կացության թույլտվության համընդհանուր ձեւաչափ<sup>3</sup>՝ այդպիսով անդամ պետություններին հնարավորություն տալով տրամադրել տեղեկատվություն, մասնավորապես այն մասին, թե ինչպիսի պայմաններում են մարդկանց թույլատրում աշխատել,
- 14) երրորդ երկրի այն քաղաքացիներին, որոնք ունեն Շենգենյան *կանոնագիրք*ն ամբողջությամբ կիրառող անդամ պետության կողմից տրված վավերական ճամփորդական փաստաթուղթ եւ ԵՄ կապույտ քարտ, մինչեւ երեք ամիս ժամանակահատվածով պետք է թույլատրել մուտք գործել եւ ազատ տեղաշարժվել Շենգենյան *կանոնագիրք*ն ամբողջությամբ կիրառող մեկ այլ անդամ պետության տարածքում՝ «Սահմանները հատելու միջոցով անձանց տեղաշարժը կարգավորող կանոնների մասին Համայնքի կանոնները սահմանող» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2006 թվականի մարտի 15-ի թիվ 562/2006 (ԵՀ) կանոնակարգի (<<Շենգենյան սահմանների մասին>> օրենսգիրք)<sup>1</sup>, Բենիլյուքսի տնտեսական միության պետությունների կառավարությունների եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության ու Ֆրանսիայի Հանրապետության միջեւ «Իրենց ընդհանուր սահմանային անցակետերում ստուգումների աստիճանական վերացման մասին» 1985 թվականի հունիսի 14-ի Շենգենյան համաձայնագիրը կիրարկող կոնվենցիայի 21-րդ հոդվածի համաձայն,
- 15) երրորդ երկրի բարձր որակավորում ունեցող աշխատողների մասնագիտական եւ աշխարհագրական շարժունակությունը պետք է ճանաչվի որպես առաջնային մեխանիզմ՝ աշխատանքային շուկայի արդյունավետությունը բարձրացնելու, որակավորման հետ կապված թերությունները կանխելու, տարածաշրջանային անհամապատասխանությունները նվազեցնելու համար: Համայնքի նախապատվության սկզբունքը պահպանելու եւ համակարգի հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակով երրորդ երկրի բարձր որակավորում ունեցող աշխատողի մասնագիտական շարժունակությունը պետք է սահմանափակվի անդամ պետությունում օրինական աշխատանքի առաջին երկու տարով,

---

<sup>3</sup> ՊՏ L 157, 15.06.2002 թ., էջ 1:

<sup>1</sup> ՊՏ L 105, 13.04.2006 թ., էջ 1:

- 16) սույն Հրահանգով լիովին պահպանվում է անդամ պետությունների քաղաքացիների եւ ԵՄ կապույտ քարտի սեփականատերերի նկատմամբ վճարման հետ կապված հավասար վերաբերմունքը, երբ նրանք գտնվում են համեմատելի իրավիճակներում,
- 17) ԵՄ կապույտ քարտի սեփականատերերի նկատմամբ դրսևորվող հավասար վերաբերմունքը չի տարածվում մասնագիտական վերապատրաստման ոլորտի միջոցների վրա, որոնք կարգավորվում են սոցիալական աջակցության ծրագրերով,
- 18) ԵՄ կապույտ քարտի սեփականատերերը պետք է օգտվեն սոցիալական ապահովության հետ կապված հավասար վերաբերմունքից: Սոցիալական ապահովության ճյուղերը սահմանված են « Համայնքի տարածքով տեղաշարժվող աշխատողների, ինքնազբաղ անձանց եւ նրանց ընտանիքի անդամների նկատմամբ սոցիալական ապահովության ծրագրերի կիրառման մասին» Խորհրդի 1971 թվականի հունիսի 14-ի թիվ 1408/71 (ԵՏՀ) կանոնակարգով<sup>2</sup>: Թիվ 1408/71 (ԵՏՀ) կանոնակարգի եւ թիվ 574/72 (ԵՏՀ) կանոնակարգի դրույթներն ընդլայնող՝ Խորհրդի 2003 թվականի մայիսի 14-ի թիվ 859/2003 (ԵՏՀ) կանոնակարգը՝ ուղղված երրորդ երկրի այն քաղաքացիներին, որոնց վրա այդ դրույթները դեռ չեն տարածվում՝ միայն իրենց քաղաքացիության հիմքերով<sup>3</sup>, ընդլայնում է թիվ 1408/71 (ԵՏՀ) կանոնակարգի դրույթներն՝ ուղղված երրորդ երկրի այն քաղաքացիներին, որոնք օրինական հիմունքներով բնակվում են Համայնքում եւ որոնք գտնվում են միջսահմանային իրավիճակում: Սույն Հրահանգում սոցիալական ապահովության հետ կապված հավասար վերաբերմունքի մասին դրույթները նույնպես անմիջականորեն վերաբերում են այն անձանց, որոնք երրորդ երկրից անմիջապես մուտք են գործում անդամ պետության տարածք՝ պայմանով, որ համապատասխան անձը օրինական հիմունքներով բնակվի որպես ԵՄ վավերական կապույտ քարտի սեփականատեր՝ ներառյալ ժամանակավոր գործազրկության ժամանակահատվածը, եւ բավարարի ազգային իրավունքով սահմանված պայմանները՝ սոցիալական ապահովության համապատասխան նպաստներից օգտվելու իրավունք ունենալու համար:

Այնուհանդերձ, սույն Հրահանգը չպետք է ԵՄ կապույտ քարտի սեփականատիրոջը տա ավելի շատ իրավունքներ, քան նրանց, որոնք արդեն նախատեսված են անդամ

---

<sup>2</sup> ՊՏ L 149, 05.07.1971 թ., էջ 2:

<sup>3</sup> ՊՏ L 124, 20.05.2003 թ., էջ 1:

պետությունների միջև միջսահմանային վեճեր ունեցող երրորդ երկրի քաղաքացիների համար սոցիալական ապահովության ոլորտում գործող համայնքային իրավունքով: Բացի դրանից՝ սույն Հրահանգը չպետք է իրավունքներ տա՝ կապված այն կարգավիճակների հետ, որոնք դուրս են համայնքային իրավունքի գործողության ոլորտից, ինչպես օրինակ, երրորդ երկրում բնակվող ընտանիքի անդամների կարգավիճակը,

- 19) մեկ այլ անդամ պետությունում երրորդ երկրի քաղաքացու ձեռք բերած մասնագիտական որակավորումները պետք է ճանաչվեն նույն կերպ, ինչպես Միության քաղաքացիներինը: Երրորդ երկրում ձեռք բերված որակավորումները պետք է հաշվի առնվեն «Մասնագիտական որակավորումները ճանաչելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005 թվականի սեպտեմբերի 7-ի 2005/36/ԵՀ հրահանգի համաձայն<sup>4</sup>,
- 20) բարձր որակավորում ունեցող երրորդ երկրի քաղաքացու աշխարհագրական շարժունակությունը պետք է վերահսկվի եւ պայմանավորված լինի պահանջարկով օրինական հիմունքներով Համայնքում նրա մնալու առաջին ժամանակահատվածի ընթացքում : «Երրորդ երկրի քաղաքացիներ հանդիսացող երկարաժամկետ հիմունքներով ռեզիդենտների կարգավիճակի բնակության/կացության կարգավիճակ ունեցող երրորդ երկրի քաղաքացիների վերաբերյալ» Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 25-ի 2003/109/ԵՀ հրահանգից կատարված շեղումները պետք է նախատեսվեն աշխարհագրական շարժունակությամբ բարձր որակավորում ունեցող երրորդ երկրի այն քաղաքացիներին<sup>5</sup> չտուգանելու նպատակով, որոնք դեռ չեն դիմել այդ Հրահանգում նշված ԵՀ երկարաժամկետ բնակության/կացության կարգավիճակ ձեռք բերելու համար, ինչպես նաեւ աշխարհագրական ու շրջանառու միգրացիան խթանելու նպատակով,
- 21) բարձր որակավորում ունեցող երրորդ երկրի քաղաքացիների շարժունակությունը Համայնքի եւ իրենց ծագման երկրների միջև պետք է խրախուսվի եւ կարգավորվի: 2003/109/ԵՀ Հրահանգը պետք է նախատեսվի տարածքից բացակայելու ժամանակահատվածը երկարաձգելու նպատակով՝ չընդհատելով օրինական եւ շարունակական բնակության/կացության ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է ԵՀ երկարաժամկետ բնակության/կացության կարգավիճակ ձեռք բերելու իրավունք

---

<sup>4</sup> ՊՏ L 255, 30.09.2005 թ., էջ. 22:

<sup>5</sup> ՊՏ L 16, 23.01.2004, էջ. 44:

ունենալու համար: Այն բանից հետո, երբ բարձր որակավորում ունեցող աշխատողները ձեռք են բերում ԵՀ երկարաժամկետ բնակության/կացության կարգավիճակ, պետք է նաև թույլատրվեն բացակայության ավելի երկար ժամկետներ, քան 2003/109/ԵՀ հրահանգով նախատեսվածներն են,

- 22) սույն Հրահանգը կիրարկելիս անդամ պետությունները պետք է գերծ մնան աշխատողների ակտիվ հավաքագրումից զարգացող երկրների այն ոլորտներում, որտեղ կա անձնակազմի պակաս: Հանրային եւ մասնավոր ոլորտների աշխատողների նկատմամբ կիրառվող հավաքագրման էթիկական քաղաքականություններն ու սկզբունքները պետք է մշակվեն առանցքային ոլորտներում, օրինակ բժշկության ոլորտում, ինչպես ընդգծված է «Զարգացող երկրներում բուժաշխատողների խիստ պակաս լինելու հետ կապված խնդրի լուծմանն ուղղված գործողությունների համար Եվրոպական ծրագրի մասին» Խորհրդի եւ անդամ պետությունների 2007 թվականի մայիսի 14-ի եզրակացություններում, եւ, անհրաժեշտության դեպքում, կրթության ոլորտում: Դրանք, անհրաժեշտության դեպքում, պետք է ամրապնդվեն շրջանառու եւ ժամանակավոր միգրացիայի դյուրացմանն ուղղված մեխանիզմների, ուղեցույցների եւ այլ գործիքների մշակման եւ կիրառման միջոցով, ինչպես նաև այլ միջոցներով, որոնք համապատասխանաբար կնվազեցնեն եւ կավելացնեն զարգացող երկրների վրա բարձր որակավորում ունեցող անձանց ներգաղթի բացասական ու դրական ազդեցությունները՝ «ուղեղների արտահոսքը» «ուղեղների ներհոսք» դարձնելու նպատակով,
- 23) ընտանիքի վերամիավորման եւ ամուսինների համար աշխատանքից օգտվելու հնարավորության բարենպաստ պայմանները պետք է լինեն սույն Հրահանգի հիմնական տարրերը, որոնց նպատակն է գրավել երրորդ երկրի բարձր որակավորում ունեցող աշխատողներին: «Ընտանիքի վերամիավորման մասին» Խորհրդի 2003 թվականի սեպտեմբերի 22-ի 2003/86/ԵՀ հրահանգի հատուկ շեղումները<sup>1</sup> պետք է նախատեսվեն սույն նպատակին հասնելու համար: Սույն Հրահանգի 15(3) հոդվածում ներառված շեղումը չի խոչընդոտում անդամ պետություններին՝ ԵՄ կապույտ քարտի սեփականատիրոջ ընտանիքի անդամների համար պահպանել եւ ներկայացնել ինտեգրման հետ կապված պայմաններ ու միջոցներ՝ ներառյալ լեզվի ուսուցումը,

---

<sup>1</sup> ՊՏ L 251, 03.10.2003 թ., էջ 12:

- 24) սույն Հրահանգի կիրարկումը դիտանցելու համար պետք է նախատեսվեն հաշվետվության ներկայացման հատուկ դրույթներ՝ զարգացող երկրներում «ուղեղների արտահոսքի» հետ կապված դրա հնարավոր ազդեցությունները պարզելու եւ հնարավորինս վերացնելու նպատակով եւ «ուղեղների կորստից» խուսափելու համար: «Միգրացիայի եւ միջազգային պաշտպանության վերաբերյալ Համայնքի վիճակագրության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2007 թվականի հուլիսի 11-ի թիվ 862/2007 ԵՀ կանոնակարգի համաձայն՝ անդամ պետությունների կողմից համապատասխան տվյալները պետք է ամեն տարի հաղորդվեն Հանձնաժողովին<sup>2</sup>,
- 25) քանի որ սույն Հրահանգի նպատակները, մասնավորապես, ընդունման հատուկ ընթացակարգի ներմուծումը եւ բարձր որակավորում պահանջող աշխատանքի նպատակով անդամ պետություններում երրորդ երկրի քաղաքացիների եւ նրանց ընտանիքի անդամների համար ավելի քան երեք ամիս ժամկետով կիրառելի մուտքի ու բնակության/կացության պայմանների ընդունումը բավարար չափով չեն կարող իրագործվել անդամ պետությունների կողմից՝ հատկապես անդամ պետությունների միջեւ շարժունակության ապահովման մասով, եւ կարող են ավելի լավ իրագործվել համայնքային մակարդակով, պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքի համաձայն՝ Համայնքը կարող է միջոցներ ձեռնարկել: Նույն Հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի համաձայն՝ սույն Հրահանգով չի նախատեսվում ավելին, քան անհրաժեշտ է այդ նպատակին հասնելու համար,
- 26) սույն Հրահանգով հաշվի են առնվում հիմնարար իրավունքներն ու պահպանվում մասնավորապես «Եվրոպական միության մասին» պայմանագրի 6-րդ հոդվածով ճանաչված եւ Եվրոպական միության Հիմնարար իրավունքների մասին խարտիայում արտացոլված սկզբունքները,
- 27) Եվրոպական պառլամենտի, Խորհրդի եւ Հանձնաժողովի «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին»<sup>3</sup> միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ հոդվածի համաձայն՝ խրախուսվում է, որ անդամ պետություններն, իրենց եւ Համայնքի շահերից

---

<sup>2</sup> ՊՏ L 199, 31.07.2007 թ., էջ 23:

<sup>3</sup> ՊՏ C 321, 31.12.2003 թ., էջ 1:

ելնելով, հնարավորության դեպքում կազմեն սույն Հրահանգի եւ փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ եւ հրապարակեն դրանք,

- 28) «Եվրոպական միության մասին» պայմանագրին եւ «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրին կից ներկայացված «Միացյալ Թագավորության եւ Իռլանդիայի դիրքորոշման մասին» արձանագրության 1-ին եւ 2-րդ հոդվածների համաձայն եւ առանց խախտելու համապատասխան արձանագրության 4-րդ հոդվածը՝ այս անդամ պետությունները չեն մասնակցում սույն Հրահանգի ընդունմանը եւ պարտավորված չեն դրանով, կամ այն չի կիրառվում նրանց նկատմամբ,
- 29) «Եվրոպական միության մասին» պայմանագրին եւ «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրին կից ներկայացված «Դանիայի դիրքորոշման մասին» արձանագրության 1-ին եւ 2-րդ հոդվածների համաձայն՝ Դանիան չի մասնակցում սույն Հրահանգի ընդունմանը եւ պարտավորված չէ դրանով, կամ այն չի կիրառվում նրա նկատմամբ,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ

ԳԼՈՒԽ I

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

*Հոդված 1*

**Կարգավորման առարկան**

Սույն Հրահանգի նպատակն է որոշել՝

- ա) բարձր որակավորում պահանջող աշխատանքի նպատակով անդամ պետության տարածքում ավելի քան երեք ամիս ժամկետով երրորդ երկրի քաղաքացիների՝ որպես ԵՄ կապույտ քարտի սեփականատեր, եւ նրանց ընտանիքի անդամների մուտքի եւ բնակության/կացության պայմանները.

բ) (ա) կետի համաձայն՝ անդամ պետություններում, բացառությամբ առաջին անդամ պետության, երրորդ երկրի քաղաքացիների եւ նրանց ընտանիքի անդամների մուտքի եւ բնակության/կացության պայմանները:

## *Հոդված 2*

### **Սահմանումները**

Սույն հրահանգի նպատակներով՝

ա) «երրորդ երկրի քաղաքացի» նշանակում է ցանկացած անձ, որը, Պայմանագրի 17 (1) հոդվածի իմաստով, Միության քաղաքացի չէ.

բ) «բարձր որակավորում պահանջող աշխատանք» նշանակում է այն անձի աշխատանքը, որը՝

– որպես աշխատող համապատասխան անդամ պետությունում, անկախ իրավահարաբերություններից, պաշտպանված է ազգային աշխատանքային իրավունքի եւ(կամ) ազգային գործելակերպի համաձայն՝՝ մեկ այլ անձի համար կամ հրահանգով իրական եւ արդյունավետ աշխատանք կատարելու նպատակով.

– վճարվում է եւ.

– ունի պահանջվող բավարար եւ հատուկ կարողություններ, որոնց մասին վկայում են բարձրագույն մասնագիտական որակավորումները.

գ) «ԵՄ կապույտ քարտ» նշանակում է թույլտվություն, որը կոչվում է «ԵՄ կապույտ քարտ», որը, սույն Հրահանգի պայմանների համաձայն, դրա սեփականատիրոջը անդամ պետության տարածքում բնակվելու եւ աշխատելու իրավունք է տալիս.

դ) «առաջին անդամ պետություն» նշանակում է պետություն, որը երրորդ երկրի քաղաքացուն առաջինն է «ԵՄ կապույտ քարտ» տրամադրում.

ե) «երկրորդ անդամ պետություն» նշանակում է ցանկացած անդամ պետություն՝ բացառությամբ առաջին անդամ պետության.

- զ) «ընտանիքի անդամներ» նշանակում է 2003/86/ԵՀ հրահանգի 4(1) հոդվածով սահմանված երրորդ երկրի քաղաքացիներ.
- է) «բարձրագույն մասնագիտական որակավորումներ» նշանակում է բարձրագույն կրթության որակավորումների մասին վկայող փաստաթղթերով հաստատված կամ, ազգային իրավունքով նախատեսված լինելու դեպքում շեղում կատարելով, բարձրագույն կրթության որակավորումների հետ համեմատելի մակարդակի առնվազն 5 տարվա մասնագիտական փորձով հաստատված որակավորումներ, որոնք համապատասխանում են աշխատանքային պայմանագրում կամ պարտադիր բնույթ ունեցող աշխատանքի առաջարկի մեջ նշված մասնագիտությանը կամ ոլորտին.
- ը) «բարձրագույն կրթության որակավորումներ» նշանակում է հետմիջնակարգ բարձրագույն կրթության ծրագրի, հատկապես պետության կողմից որպես բարձրագույն ուսումնական հաստատություն ճանաչված ուսումնական հաստատության կողմից անցկացված մի շարք դասընթացների բարեհաջող ավարտելը հավաստող եւ իրավասու մարմնի կողմից տրված ցանկացած դիպլոմ, վկայական կամ պաշտոնական որակավորումների մասին վկայող այլ փաստաթուղթ: Սույն Հրահանգի նպատակներով՝ բարձրագույն կրթության որակավորումը պետք է հաշվի առնվի պայմանով, որ այն ստանալու համար անհրաժեշտ ուսումը տեւել է առնվազն երեք տարի.
- թ) «մասնագիտական փորձ» նշանակում է համապատասխան մասնագիտությամբ փաստացի եւ օրինական գործունեություն.
- ժ) «կարգավորվող մասնագիտություն» նշանակում է 2005/36/ԵՀ հրահանգի 3(1)(ա) հոդվածով սահմանված կարգավորվող մասնագիտություն:

### *Հոդված 3*

#### **Գործողության ոլորտը**

1. Սույն Հրահանգը կիրառվում է երրորդ երկրի այն քաղաքացիների նկատմամբ, որոնք բարձր որակավորում պահանջող աշխատանքի նպատակով սույն Հրահանգի պայմանների համաձայն դիմում են անդամ պետության տարածք ընդունվելու համար:

2. Սույն Հրահանգը չի կիրառվում երրորդ երկրի այն քաղաքացիների նկատմամբ՝

ա) որոնք ժամանակավոր պաշտպանության հիմքերով լիազորված են բնակվելու անդամ պետությունում կամ դիմել են այդ հիմքերով բնակվելու լիազորություն ստանալու համար եւ սպասում են իրենց կարգավիճակի վերաբերյալ որոշմանը.

բ) որոնք, «Երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց՝ որպես փախստականների կամ որպես այլ կերպ միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց, որակավորման ու կարգավիճակի եւ տրամադրված պաշտպանության բնույթի նվազագույն չափանիշների մասին» Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի 2004/83/ԵՀ հրահանգին համապատասխան, միջազգային պաշտպանության շահառուներ են՝ կամ, այդ Հրահանգի համաձայն, դիմել են միջազգային պաշտպանության համար, եւ որոնց դիմումի վերաբերյալ վերջնական որոշում դեռ չի ընդունվել.

գ) որոնք, ազգային իրավունքի, միջազգային պարտականությունների կամ անդամ պետության պրակտիկայի համաձայն՝ միջազգային պաշտպանության շահառուներ են կամ ազգային իրավունքի, միջազգային պարտականությունների կամ անդամ պետության պրակտիկայի համաձայն՝ դիմել են պաշտպանության համար, եւ որոնց դիմումի վերաբերյալ վերջնական որոշում դեռ չի ընդունվել.

դ) որոնք, 2005/71/ԵՀ հրահանգի իմաստով, գիտահետազոտական ծրագրեր իրականացնելու նպատակով դիմում են անդամ պետությունում որպես գիտահետազոտական աշխատանք կատարողներ բնակվելու համար.

ե) որոնք Միության այն քաղաքացիների ընտանիքի անդամներն են, որոնք, « Միության քաղաքացիների եւ նրանց ընտանիքի անդամների՝ անդամ պետությունների տարածքում ազատորեն տեղաշարժվելու եւ բնակվելու իրավունքի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի 2004/38/ԵՀ հրահանգին համապատասխան, օգտվել կամ օգտվում են Համայնքով ազատ տեղաշարժվելու իրենց իրավունքից<sup>2</sup>.

զ) որոնք 2003/109/ԵՀ հրահանգի համաձայն՝ օգտվում են անդամ պետությունում ԵՀ երկարաժամկետ բնակության/կացության կարգավիճակից եւ վարձու կամ ոչ վարձու

<sup>1</sup> ՊՏ L 304, 30.09.2004 թ., էջ 12:

<sup>2</sup> ՊՏ L 158, 30.04.2004 թ., էջ 77, ուղղումներ՝ ՊՏ L 229, 29.06.2004 թ., էջ 35:

տնտեսական գործունեություն վարելու նպատակով օգտվում են այլ պետությունում բնակվելու իրենց իրավունքից.

է) որոնք մուտք են գործում անդամ պետություն՝ միջազգային համաձայնագրում ներառված պարտավորությունների համաձայն՝ դյուրացնելով առևտրի եւ ներդրումների հետ առնչվող ֆիզիկական անձանց մուտքն ու ժամանակավորապես գտնվելը.

ը) որոնք ընդունվել են անդամ պետության տարածք՝ որպես սեզոնային աշխատողներ.

թ) որոնց արտաքսումը կասեցվել է փաստի կամ օրենքի ուժով.

ժ) որոնց վրա «Ծառայությունների տրամադրման շրջանակներում աշխատողներին նշանակելու վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1996 թվականի դեկտեմբերի 16-ի 96/71/ԵՀ հրահանգը<sup>1</sup> տարածվում է այնքան ժամանակ, քանի դեռ նրանք նշանակված են համապատասխան անդամ պետության տարածքում.

Բացի դրանից սույն Հրահանգը չի տարածվում երրորդ երկրի այն քաղաքացիների եւ նրանց ընտանիքի անդամների վրա՝ անկախ նրանց քաղաքացիությունից, որոնք, Համայնքի եւ դրա անդամ պետությունների ու այդ երրորդ երկրների միջեւ կնքված համաձայնագրերի համաձայն՝ օգտվում են Միության քաղաքացիներին տրված ազատ տեղաշարժվելու համարժեք իրավունքներից:

3. Սույն Հրահանգով չի սահմանափակում Համայնքի եւ (կամ) դրա անդամ պետությունների ու մեկ կամ ավելի երրորդ երկրների միջեւ կնքված ցանկացած համաձայնագրի գործողությունը, որում թվարկվում են այն մասնագիտությունները, որոնք չեն կարգավորվում սույն Հրահանգով՝ աշխատուժի պակաս ունեցող ոլորտներում էթիկայի նորմերը պահպանելու եւ այդ համաձայնագրերի ստորագրող կողմ հանդիսացող զարգացող երկրներում մարդկային ռեսուրսների պաշտպանության նպատակով :

4. Սույն Հրահանգով չի սահմանափակվում անդամ պետությունների՝ աշխատանքի հետ կապված ցանկացած նպատակով բնակության/կացության թույլտվություն տալու, բացառությամբ ԵՄ կապույտ քարտի, իրավունքը: Սույն Հրահանգով նախատեսվածի համաձայն բնակության/կացության այդ թույլտվություններով այլ անդամ պետություններում բնակվելու իրավունք չի տրվում :

---

<sup>1</sup> ՊՏ L 18, 21.01.1997 թ., էջ 1:

#### *Հոդված 4*

#### **Առավել բարենպաստ դրույթներ**

1. Սույն Հրահանգով չի սահմանափակվում հետեւյալ ակտերի առավել բարենպաստ դրույթների գործողությունը՝
  - ա) համայնքային իրավունք՝ ներառյալ Համայնքի միջեւ կամ Համայնքի եւ դրա անդամ պետությունների ու մեկ կամ ավելի երրորդ երկրների միջեւ կնքված երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերը.
  - բ) մեկ կամ ավելի անդամ պետությունների եւ մեկ կամ ավելի երրորդ երկրների միջեւ կնքված երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր:
2. Սույն Հրահանգը չի ազդում անդամ պետությունների՝ առավել բարենպաստ դրույթներ ընդունելու կամ պահպանելու իրավունքի վրա այն քաղաքացիների համար, որոնց նկատմամբ այն կիրառվում է՝ սույն Հրահանգի հետեւյալ դրույթներին համապատասխան՝
  - ա) 5(3) հոդվածը՝ 18-րդ հոդվածի կիրառմամբ.
  - բ) 11-րդ, 12(1), երկրորդ նախադասություն, 12(2), 13-րդ, 14-րդ, 15-րդ եւ 16(4) հոդվածներ:

#### **ԳԼՈՒԽ II**

#### **ԸՆԴՈՒՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

#### *Հոդված 5*

#### **Ընդունման չափորոշիչները**

1. Չսահմանափակելով 10(1) հոդվածի գործողությունը՝ երրորդ երկրի այն քաղաքացին, որը սույն Հրահանգի դրույթների համաձայն՝ դիմում է ԵՄ կապույտ քարտի համար՝
  - ա) ներկայացնում է տվյալ անդամ պետություններում առնվազն մեկ տարվա վավերական աշխատանքային պայմանագիր կամ ազգային իրավունքով նախատեսված պարտադիր բնույթ ունեցող աշխատանքի առաջարկ՝ բարձր որակավորում ունեցող աշխատողների համար.

- բ) ներկայացնում է Միության քաղաքացիների կողմից աշխատանքային պայմանագրում կամ ազգային իրավունքով նախատեսված պարտադիր բնույթ ունեցող աշխատանքի առաջարկում նշված կարգավորվող մասնագիտության պարտականությունների կատարման ազգային իրավունքով սահմանված պայմանների բավարարումը հավաստող փաստաթուղթ.
- գ) չկարգավորվող մասնագիտությունների համար՝ ներկայացնում է աշխատանքային պայմանագրում նշված կամ ազգային իրավունքով նախատեսված պարտադիր բնույթ ունեցող աշխատանքի առաջարկում նշված պաշտոնում կամ ոլորտում համապատասխան բարձրագույն մասնագիտական որակավորումները հավաստող փաստաթղթեր.
- դ) ներկայացնում է վավերական ճամփորդական փաստաթուղթ, ինչպես որոշված է ազգային իրավունքով, վիզայի համար դիմում, կամ, եթե պահանջվում է, վիզա, բնակության/կացության վավերական թույլտվության կամ ազգային երկարաժամկետ վիզայի ապացույց: Անդամ պետությունները կարող են պահանջել, որ ճամփորդական փաստաթղթի վավերականության ժամկետում ներառվի բնակության/կացության թույլտվության առնվազն սկզբնական ժամկետը.
- ե) ներկայացնում է ապացույց այն մասին, որ ունի, կամ, եթե նախատեսված է ազգային իրավունքով, դիմել է բոլոր ռիսկային հիվանդությունների ապահովագրության համար, որը սովորաբար վերաբերում է համապատասխան անդամ պետության քաղաքացիներին այն ժամանակահատվածի համար, երբ ըստ աշխատանքային պայմանագրի, կամ, բխելով դրանից, չի տրամադրվում այդպիսի ապահովագրական ծածկույթ կամ նպաստներից օգտվելու համապատասխան իրավունք.
- զ) սպառնալիք չի ներկայացնում հասարակական կարգի, հանրային անվտանգության կամ հանրային առողջության համար:

2. Անդամ պետությունները կարող են պահանջել, որ դիմողը տրամադրի իր հասցեն՝ համապատասխան անդամ պետության տարածքում:

3. Ի հավելումն 1-ին պարբերությամբ սահմանված պայմանների՝ աշխատանքային պայմանագրում կամ պարտադիր բնույթ ունեցող աշխատանքի առաջարկում նշված ամսական կամ տարեկան աշխատավարձից ստացված համախառն տարեկան աշխատավարձը չի զիջում

անդամ պետությունների կողմից սահմանված կամ նախատեսված աշխատավարձի շեմին, որը համապատասխան անդամ պետության միջին համախառն տարեկան աշխատավարձից առնվազն 1,5 անգամ ավել է:

4. 3-րդ պարբերությունը կիրարկելիս՝ անդամ պետությունները կարող են պահանջել, որ համապատասխան մասնագիտական ոլորտներում բարձր որակավորում պահանջող աշխատանքի համար պահպանվեն կիրառելի օրենքի բոլոր պայմանները, կոլեկտիվ պայմանագրերը կամ գործելակերպերը:

5. Շեղում կատարելով 3-րդ պարբերությունից այն մասնագիտությունների պահանջարկ ունեցող աշխատանքների համար, որոնց դեպքում հատկապես երրորդ երկրի քաղաքացի աշխատողների կարիք է զգացվում եւ որոնք պատկանում են Ջբաղմունքների միջազգային ստանդարտ դասակարգման (ISCO) 1-ին եւ 2-րդ հիմնական խմբերին՝ աշխատավարձի շեմը տվյալ անդամ պետության միջին համախառն տարեկան աշխատավարձից կարող է առնվազն 1,2 անգամ ավելի լինել : Այս դեպքում տվյալ անդամ պետությունը ամեն տարի Հանձնաժողովին ներկայացնում է այն մասնագիտությունների ցանկը, որոնց դեպքում որոշվել է շեղում կատարել :

6. Սույն Հոդվածը չի հակասում բարձր որակավորում պահանջող աշխատանքի համար համապատասխան զբաղվածության ոլորտներում կիրառելի կոլեկտիվ պայմանագրերին կամ գործելակերպերին:

#### *Հոդված 6*

#### **Ընդունման թիվը**

Սույն Հրահանգը չի ազդում անդամ պետության՝ բարձր որակավորում պահանջող աշխատանքի նպատակով իր տարածք մուտք գործող երրորդ երկրի քաղաքացիներին ընդունելու թիվը որոշելու իրավունքի վրա:

#### ԳԼՈՒԽ III

**ԵՄ ԿԱՊՈՒՅՏ ՔԱՐՏԸ, ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ**

## Հոդված 7

### ԵՄ կապույտ քարտը

1. Երրորդ երկրի այն քաղաքացուն, որը համապատասխանում է 5-րդ հոդվածով սահմանված պահանջներին եւ դիմել է ԵՄ կապույտ քարտ ստանալու համար եւ որի համար 8-րդ հոդվածի համաձայն իրավասու մարմինները դրական որոշում են ընդունել, տրամադրվում է ԵՄ կապույտ քարտ:

Համապատասխան անդամ պետությունը երրորդ երկրի քաղաքացուն տալիս է բոլոր հնարավորությունները՝ անհրաժեշտ վիզաները ձեռք բերելու համար:

2. Անդամ պետությունները սահմանում են ԵՄ կապույտ քարտի վավերականության ստանդարտ ժամկետ, որը կազմում է մեկից չորս տարի: Եթե աշխատանքային պայմանագիրը ներառում է այդ ժամկետից պակաս ժամկետ, ԵՄ կապույտ քարտը տրվում կամ երկարաձգվում է աշխատանքային պայմանագրում նշված ժամկետով՝ գումարած երեք ամիս:

3. ԵՄ կապույտ քարտը տրվում է անդամ պետության իրավասու մարմինների կողմից, որոնք օգտագործում են թիվ 1030/2002 ԵՀ կանոնակարգով սահմանված միասնական ձեւաչափ: Համաձայն այդ Կանոնակարգի հավելվածի «ա» կետի 7.5.-9.բաժնի՝ անդամ պետությունները ԵՄ կապույտ քարտի վրա նշում են աշխատանքային շուկայից օգտվելու հնարավորության սույն Հրահանգի 12(1) հոդվածով սահմանված պայմանները: Բնակության/կացության թույլտվության «թույլտվության տեսակը» վերնագրի տակ անդամ պետությունները պետք է գրառեն՝ «ԵՄ կապույտ քարտ»:

4. ԵՄ կապույտ քարտը վավեր լինելու նթացքում իր սեփականատիրոջը տալիս է՝

ա) ԵՄ կապույտ քարտ տրամադրող անդամ պետության տարածք մուտք գործելու, կրկին մուտք գործելու եւ այդ տարածքում մնալու իրավունք.

բ) սույն Հրահանգով ճանաչված իրավունքներ:

## Հոդված 8

### Մերժման հիմքերը

1. Անդամ պետությունները ԵՄ կապույտ քարտի համար ներկայացված դիմումը մերժում են, եթե դիմողը չի համապատասխանում 5-րդ հոդվածով սահմանված պայմաններին կամ եթե ներկայացված փաստաթղթերը կեղծվել են, ձեռք են բերվել խարդախությամբ կամ կաշառքի տալու միջոցով:

2. ԵՄ կապույտ քարտի համար ներկայացված դիմումի վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ եւ ԵՄ կապույտ քարտի սեփականատիրոջ՝ օրինական աշխատանքի անցնելու առաջին երկու տարիների ընթացքում 12(1) եւ (2) հոդվածի համաձայն թույլտվության ժամկետի երկարաձգման ու լիազորությունների հարցը դիտարկելիս անդամ պետությունները կարող են ուսումնասիրել իրենց աշխատանքային շուկայում տիրող իրավիճակը եւ կիրառել թափուր տեղերը լրացնելու պահանջներին վերաբերող իրենց ազգային ընթացակարգերը:

Անդամ պետությունները կարող են ստուգել՝ արդյոք համապատասխան թափուր տեղը չի կարող լրացվել ազգային կամ համայնքային աշխատուժի, այդ անդամ պետությունում օրենքով սահմանված կարգով բնակվող եւ համայնքային կամ ազգային իրավունքի ուժով աշխատանքային արդեն ներգրավված երրորդ երկրի քաղաքացիների կողմից, կամ, համաձայն 2003/109/ԵՀ Հրահանգի III Գլխի, բարձր որակավորում ունեցող աշխատանքի նպատակով այդ անդամ պետություն տեղափոխվելու ցանկություն ունեցող ԵՀ երկարաժամկետ բնակության/կացության կարգավիճակ ունեցող անձանց կողմից:

3. ԵՄ կապույտ քարտի համար ներկայացված դիմումը, 6-րդ հոդվածի հիմքերով, նույնպես կարող է դիտարկվել որպես անընդունելի:

4. Անդամ պետությունները կարող են մերժել ԵՄ կապույտ քարտի համար ներկայացված դիմումը՝ ծագման երկրներում մասնագիտական որակավորում ունեցող աշխատողների պակաս ունեցող ոլորտներում էթիկայի նորմերը պահպանելով աշխատանքի ընդունում ապահովելու նպատակով:

5. Անդամ պետությունները կարող են մերժել ԵՄ կապույտ քարտի համար ներկայացված դիմումը, եթե, ազգային իրավունքին համապատասխան, գործատուի նկատմամբ պատժամիջոց է կիրառվել՝ չգրանցված աշխատանքի եւ (կամ) անօրինական զբաղվածության համար:

### *Հոդված 9*

#### **ԵՄ կապույտ քարտից զրկելը կամ դրա ժամկետը չերկարաձգելը**

1. Անդամ պետությունները գրկում են սույն Հրահանգի հիմքերով տրամադրված ԵՄ կապույտ քարտից կամ մերժում են դրա ժամկետի երկարաձգումը հետեւյալ դեպքերում՝

ա) երբ այն կեղծվել է, ձեռք է բերվել խարդախությամբ կամ կաշառք տալու միջոցով.

բ) երբ պարզվում է, որ դրա սեփականատերը չի համապատասխանել կամ այլևս չի համապատասխանում մուտքի եւ բնակության/կացության՝ սույն Հրահանգով սահմանված պայմաններին կամ երբ քարտի սեփականատերը բնակվում է իրեն թույլատրված նպատակներից տարբեր՝ այլ նպատակներով.

գ) երբ դրա սեփականատերը չի պահպանել 12(1), (2) եւ 13-րդ հոդվածներով սահմանված սահմանափակումները:

2. 12(2) հոդվածի երկրորդ ենթապարբերության եւ 13(4) հոդվածի համաձայն՝ տեղեկատվության պակասը չի դիտարկվում որպես ԵՄ կապույտ քարտից գրկելու կամ դրա ժամկետը չերկարաձգելու համար բավարար պատճառ, եթե դրա սեփականատերը կարող է հիմնավորել, որ տեղեկատվությունը չի հասել իրավասու մարմիններին՝ իր կամքից անկախ պատճառներով:

3. Անդամ պետությունները կարող են գրկել ԵՄ կապույտ քարտից կամ մերժել դրա ժամկետի երկարաձգումը հետեւյալ դեպքերում՝

ա) հասարակական կարգին, հանրային անվտանգությանը կամ հանրային առողջությանն առնչվող պատճառներով.

բ) երբ ԵՄ կապույտ քարտի սեփականատերը տվյալ անդամ պետության սոցիալական ապահովության համակարգից չօգտվելու դեպքում բավարար միջոցներ չունի իրեն, կամ, հարկ եղած դեպքում, իր ընտանիքի անդամներին պահելու համար: Անդամ պետությունները գնահատում են այդ միջոցները՝ ելնելով դրանց բնույթից եւ կանոնավորությունից, եւ կարող են հաշվի առնել ազգային նվազագույն աշխատավարձերի եւ թոշակների մակարդակը, ինչպես նաեւ տվյալ անձի ընտանիքի անդամների թիվը: Այդպիսի գնահատում չի կատարվում 13-րդ հոդվածում նշված գործազրկության ժամանակահատվածում.

գ) եթե տվյալ անձը չի հաղորդել իր հասցեն.

դ) երբ ԵՄ կապույտ քարտի սեփականատերը դիմում է սոցիալական աջակցության համար, այն դեպքում, երբ համապատասխան անդամ պետության կողմից անհրաժեշտ գրավոր տեղեկատվությունն իրեն տրամադրվել է նախապես:

### *Հոդված 10*

#### **Ընդունման համար դիմումները**

1. Անդամ պետությունները որոշում են՝ արդյոք ԵՄ կապույտ քարտի համար դիմում պետք է ներկայացնի երրորդ երկրի քաղաքացին եւ(կամ) նրա գործատուն:

2. Դիմումը դիտարկվում է քննվում է, երբ երրորդ երկրի տվյալ քաղաքացին բնակվում է այն անդամ պետության տարածքից դուրս, որտեղ նա ցանկանում է ընդունվել կամ երբ նա արդեն բնակվում է այդ անդամ պետությունում՝ որպես բնակության/կացության վավերական թույլտվություն կամ երկարաժամկետ վիզա ունեցող անձ:

3. Շեղում կատարելով 2-րդ պարբերությունից՝ անդամ պետությունը, համաձայն իր ազգային իրավունքի, կարող է ընդունել դիմումը, որը ներկայացվում է այն ժամանակ, երբ երրորդ երկրի տվյալ քաղաքացին չունի բնակության/կացության վավերական թույլտվություն, բայց օրինական հիմքերով գտնվում է իր տարածքում:

4. Շեղում կատարելով 2-րդ պարբերությունից՝ անդամ պետությունը կարող է նախատեսել, որ դիմումը կարող է ներկայացվել միայն իր տարածքից դուրս, եթե երրորդ երկրի բոլոր քաղաքացիների կամ երրորդ երկրի որոշակի կատեգորիայի քաղաքացիների համար այդպիսի սահմանափակումները սույն Հրահանգի ընդունման պահին արդեն սահմանված են գործող ազգային իրավունքով:

### *Հոդված 11*

#### **Ընթացակարգային երաշխիքները**

1. Անդամ պետությունների իրավասու մարմինները ընդունում են որոշումներ՝ ԵՄ կապույտ քարտ ստանալու համար ամբողջովին ձեռակերպված դիմումի վերաբերյալ եւ, տվյալ անդամ պետության ազգային իրավունքով սահմանված ծանուցման ընթացակարգերի

համաձայն, հնարավորինս շուտ եւ ամենաուշը 90 օրվա ընթացքում ներկայացվելիք դիմումի մասին գրավոր ծանուցում են դիմողին:

Համապատասխան անդամ պետության ազգային իրավունքով որոշվում է մինչեւ առաջին ենթապարբերությամբ նախատեսված ժամկետի ավարտը չընդունված որոշման ցանկացած արդյունք:

2. Եթե դիմումին կից ներկայացված տեղեկատվությունը կամ փաստաթղթերը բավարար չեն, իրավասու մարմինները պահանջվող լրացուցիչ տեղեկատվության մասին ծանուցում են դիմողին եւ այն տրամադրելու համար սահմանում խելամիտ վերջնաժամկետ: 1-ին պարբերության մեջ նշված ժամկետը կասեցվում է մինչեւ մարմինները կստանան պահանջվող տեղեկատվությունն ու փաստաթղթերը: Եթե լրացուցիչ տեղեկատվությունը կամ փաստաթղթերը մինչեւ վերջնաժամկետը չեն տրամադրվել, դիմումը կարող է մերժվել:

3. ԵՄ կապույտ քարտի համար ներկայացված դիմումը մերժելու մասին ցանկացած որոշման, ԵՄ կապույտ քարտի ժամկետը չերկարաձգելու կամ ԵՄ կապույտ քարտից զրկելու վերաբերյալ որոշման մասին համապատասխան ազգային իրավունքի ծանուցումների վերաբերյալ ընթացակարգերի համաձայն՝ գրավոր ծանուցվում է երրորդ երկրի տվյալ քաղաքացուն, իսկ, անհրաժեշտության դեպքում, նրա գործատուին եւ ազգային իրավունքի համաձայն՝ համապատասխան անդամ պետությունում տրվում է վիճարկման հնարավորություն: Ծանուցման մեջ նշվում են որոշման պատճառները, հնարավոր բողոքարկման հասանելի ընթացակարգերը եւ գործողություն ձեռնարկելու ժամկետները:

#### ԳԼՈՒԽ IV

#### ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

##### *Հոդված 12*

##### *Աշխատանքային շուկայից օգտվելու հնարավորությունը*

1. Որպես ԵՄ կապույտ քարտի սեփականատեր՝ համապատասխան անդամ պետությունում օրինական հիմունքներով աշխատելու առաջին երկու տարվա ընթացքում համապատասխան անձի համար աշխատանքային շուկայից օգտվելու հնարավորությունը սահմանափակվում է միայն վճարովի աշխատանքի կատարմամբ, ինչը համապատասխանում է 5-րդ հոդվածով սահմանված ընդունման պայմաններին: Այդ երկու տարիներից հետո անդամ պետությունները բարձր որակավորում պահանջող աշխատանքից օգտվելու առումով համապատասխան անձանց

համար կարող են ապահովել քաղաքացիների նկատմամբ դրսևորվող վերաբերմունքին հավասար վերաբերմունք:

2. Որպես ԵՄ կապույտ քարտի սեփականատեր՝ համապատասխան անդամ պետությունում օրինական հիմունքներով աշխատելու առաջին երկու տարվա ընթացքում գործատուի հետ կապված փոփոխությունները ազգային ընթացակարգերի համաձայն եւ 11(1) հոդվածով ամրագրված ժամկետներում կարգավորվում են բնակության/կացության անդամ պետության իրավասու մարմինների կողմից տրված նախնական գրավոր թույլտվությամբ: Փոփոխությունները, որոնք ազդում են ընդունման պայմանների վրա, ենթակա են նախապես հաղորդման, կամ, ազգային իրավունքով նախատեսված լինելու դեպքում՝ է նախնական թույլտվության:

Այդ երկու տարիներից հետո, եթե համապատասխան անդամ պետությունը չի օգտվում 1-ին պարբերությամբ նախատեսված հավասար վերաբերմունքի հետ կապված հնարավորություններից, համապատասխան անձը, ազգային ընթացակարգերի համաձայն, բնակության/կացության անդամ պետության իրավասու մարմիններին հայտնում է 5-րդ հոդվածով ամրագրված պայմանների վրա ազդող փոփոխությունների մասին: 3. Անդամ պետությունները կարող են պահպանել աշխատանքային գործունեությամբ զբաղվելու հետ կապված սահմանափակումները՝ պայմանով, որ այդ աշխատանքային գործունեությունը ենթադրում է ժամանակավոր ներգրավվածություն պետական մարմիններում եւ պետության ընդհանուր շահը պաշտպանելու հետ կապված պարտականությունների իրականացման գործում եւ եթե գործող ազգային կամ համայնքային իրավունքի համաձայն՝ այդ գործունեությունները վերապահված են քաղաքացիներին:

4. Անդամ պետությունները կարող են պահպանել աշխատանքային գործունեությամբ զբաղվելու հետ կապված սահմանափակումներն այն դեպքերում, եթե գործող ազգային կամ համայնքային իրավունքի համաձայն՝ այդ գործունեությունները վերապահված են քաղաքացիներին, Միության քաղաքացիներին կամ ԵՏՏ քաղաքացիներին:

5. Սույն Հոդվածը կիրառվում է չսահմանափակելով Համայնքի նախապատվության սկզբունքը, ինչպես նշված է 2003 եւ 2005 թվականների «Անդամակցության մասին» ակտերի համապատասխան դրույթներում եւ մասնավորապես, աշխատանքային շուկայից տվյալ անդամ պետությունների քաղաքացիների օգտվելու իրավունքները:

### *Հոդված 13*

#### **Ժամանակավոր գործազրկությունը**

1. Գործազրկությունն ինքնին չի համարվում պատճառ ԵՄ կապույտ քարտից զրկելու համար, եթե գործազրկության ժամկետը գերազանցում է երեք հաջորդական ամիսները, կամ ԵՄ կապույտ քարտի վավերականության ժամկետի ընթացքում այն տեղի է ունենում ավելի քան մեկ անգամ:

2. 1-ին պարբերության մեջ նշված ժամկետի ընթացքում ԵՄ կապույտ քարտի սեփականատիրոջը թույլատրվում է 12-րդ հոդվածով սահմանված պայմանների համաձայն աշխատանք փնտրել եւ ստանձնել այն:

3. Անդամ պետությունները ԵՄ կապույտ քարտի սեփականատիրոջը թույլատրում են մնալ իրենց տարածքում, մինչեւ 12(2) հոդվածի համաձայն անհրաժեշտ թույլտվություն տալը կամ մերժելը: Փոփոխությունների մասին 12(2) հոդվածով սահմանվածի համաձայն հաղորդամբ գործազրկության ժամկետն ինքնաբերաբար ավարտվում է:

4. ԵՄ կապույտ քարտի սեփականատերը բնակության/կացության անդամ պետության իրավասու մարմիններին, ազգային համապատասխան ընթացակարգերի համաձայն, հաղորդում է գործազրկության ժամկետի սկսվելու մասին:

### *Հոդված 14*

#### **Հավասար վերաբերմունքը**

1. ԵՄ կապույտ քարտի սեփականատերերը օգտվում են Կապույտ քարտ տրամադրող անդամ պետության քաղաքացիների նկատմամբ դրսեւորվող միեւնույն վերաբերմունքի՝ հետեւյալի մասով՝

ա) աշխատանքային պայմաններ՝ ներառյալ վարձատրությունը, աշխատանքից ազատումը, ինչպես նաեւ աշխատավայրում առողջության եւ անվտանգության հետ կապված պահանջները.

բ) միավորումներ կազմելու եւ աշխատողների ու գործատուների շահերը ներկայացնող կազմակերպություններին կամ որեւէ կազմակերպությանն անդամակցելու ազատություն,

որի անդամները զբաղվում են կոնկրետ աշխատանքով, ինչպես նաև այդ կազմակերպությունների կողմից տրվող նպաստներ՝ առանց խախտելու հասարակական կարգին եւ հանրային անվտանգությանը վերաբերող ազգային իրավունքի դրույթները.

զ) կրթություն եւ մասնագիտական վերապատրաստում.

դ) դիպլոմների, վկայականների եւ մասնագիտական այլ որակավորումների ճանաչում՝ համաձայն համապատասխան ազգային ընթացակարգերի.

ե) Թիվ 1408/71 (ԵՏՀ) կանոնակարգով սահմանված սոցիալական ապահովության ազգային իրավունքի դրույթներ: Համապատասխանաբար կիրառվում են թիվ 859/2003 (ԵՀ) կանոնակարգի հավելվածի որոշակի դրույթները.

զ) առանց սահմանափակելու գործող երկկողմ համաձայնագրերի գործողությունը՝ եկամտի հիման վրա ստացված պարտադիր եւ օրենքով նախատեսված ծերության տարիքի հետ կապված կենսաթոշակների վճարում՝ այն տոկոսադրույքով, որը կիրառվում է պարտապան անդամ պետության օրենքի ուժով.

է) ապրանքների եւ ծառայությունների հասանելիություն, ինչպես նաև հանրությանը հասանելի ապրանքների ու ծառայությունների մատակարարում՝ ներառյալ բնակության պայմաններ ձեռք բերելու ընթացակարգերը, ինչպես նաև զբաղվածության գրասենյակների կողմից տրամադրվող տեղեկատվություն եւ խորհրդատվական ծառայություններ.

ը) համապատասխան անդամ պետության ամբողջ տարածք ազատ մուտք գործելու իրավունք՝ ազգային իրավունքով նախատեսված շրջանակներում:

2. 1(զ) եւ (է) պարբերությունների մասով՝ համապատասխան անդամ պետությունը կարող է սահմանափակել միջնակարգ եւ բարձրագույն կրթության ու մասնագիտական վերապատրաստման հարցերով ուսման եւ կենսաապահովման համար դրամաշնորհների կամ վարկերի, կամ այլ դրամաշնորհների եւ վարկերի հետ կապված հավասար վերաբերմունքի իրավունքը եւ բնակության պայմաններ ձեռք բերելու ընթացակարգերը:

1(զ) պարբերության մասով՝

ա) համալսարանական եւ հետմիջնակարգ կրթությունից եւ մասնագիտական վերապատրաստումից օգտվելու հնարավորությունը կարող է ենթակա լինել որոշակի նախապայմանների՝ համաձայն ազգային իրավունքի:

բ) համապատասխան անդամ պետությունը կարող է սահմանափակել հավասար վերաբերմունքի իրավունքը այն դեպքերում, երբ այն ԵՄ կապույտ քարտի սեփականատիրոջ կամ նրա ընտանիքի անդամի գրանցված կամ սովորաբար բնակվելու վայրը, որի համար հայցվում է արտոնություն, իր տարածքում է գտնվում:

1(ե) պարբերությունը համայնքային եւ ազգային իրավունքի համաձայն՝ չի սահմանափակում պայմանագրի գործողության ազատությունը:

3. 1-ին պարբերությամբ սահմանված հավասար վերաբերմունքի իրավունքով չի խախտվում անդամ պետության՝ ԵՄ կապույտ քարտից զրկելու կամ դրա երկարաձգումը մերժելու իրավունքը՝ համաձայն 9-րդ հոդվածի:

4. Երբ ԵՄ կապույտ քարտի սեփականատերը, 18-րդ հոդվածի համաձայն, տեղափոխվում է երկրորդ անդամ պետություն, եւ ԵՄ կապույտ քարտ տրամադրելու վերաբերյալ դրական որոշում դեռ չի ընդունվել, անդամ պետությունները կարող են սահմանափակել 1-ին պարբերության մեջ թվարկված տարածքներում հավասար վերաբերմունքի դրսևորումը, բացառությամբ՝ 1(բ) եւ (դ) պարբերությունների: Եթե այս ժամկետի ընթացքում անդամ պետությունները դիմողին թույլատրում են աշխատել 1-ին պարբերության մեջ թվարկված բոլոր տարածքներում, ապա նրանց նկատմամբ դրսևորվում է երկրորդ անդամ պետության քաղաքացիների նկատմամբ դրսևորվող միեւնույն վերաբերմունքը :

### *Հոդված 15*

#### **Ընտանիքի անդամները**

1. 2003/86/ԵՀ հրահանգը կիրառվում է սույն Հոդվածով սահմանված շեղումներով:

2. Շեղում կատարելով 2003/86/ԵՀ հրահանգի 3(1) եւ 8-րդ հոդվածներից՝ ընտանիքի վերամիավորումը չի պայմանավորվում ԵՄ կապույտ քարտի այն սեփականատիրոջ պահանջով, որն ունի մշտական բնակության/կացության իրավունք ձեռք բերելու իրական հեռանկարներ եւ բնակության/կացության նվազագույն ժամկետ:

3. Շեղում կատարելով 2003/86/ԵՀ հրահանգի 4(1) հոդվածի վերջին պարբերությունից եւ 7(2) հոդվածից՝ դրանց մեջ նշված ինտեգրման պայմաններն ու միջոցները կարող են կիրառվել միայն այն բանից հետո, երբ համապատասխան անձանց տրվում է ընտանիքի վերամիավորման իրավունք:

4. Շեղում կատարելով 2003/86/ԵՀ հրահանգի 5(4) հոդվածի առաջին ենթապարբերությունից՝ ընտանիքի անդամների համար բնակության/կացության թույլտվությունները տրամադրվում են դիմումի ներկայացման օրվանից ամենաուշը վեց ամսվա ընթացքում ընտանիքի վերամիավորման պայմանների բավարարման դեպքում:

5. Շեղում կատարելով 2003/86/ԵՀ հրահանգի 13(2) եւ (3) հոդվածներից՝ ընտանիքի անդամների բնակության/կացության թույլտվությունների վավերականության ժամկետը նույնն է, ինչ ԵՄ կապույտ քարտի սեփականատերերին տրված բնակության/կացության թույլտվություններինն այնքանով, որքանով այն թույլատրվում է իրենց ճամփորդական փաստաթղթերի վավերականության ժամկետով:

6. Շեղում կատարելով 2003/86/ԵՀ հրահանգի 14(2) հոդվածի երկրորդ նախադասությունից՝ անդամ պետությունները չեն կիրառում աշխատանքային շուկայից օգտվելու հնարավորության հետ կապված ժամկետը:

Սույն պարբերությունը կիրառելի է 2011 թվականի դեկտեմբերի 19-ից:

7. Շեղում կատարելով 2003/86/ԵՀ հրահանգի 15(1) հոդվածից՝ բնակության/կացության առանձին թույլտվություն ձեռք բերելու համար պահանջվող բնակության/կացության հինգ տարի ժամկետի հաշվարկման նպատակներով՝ տարբեր անդամ պետություններում բնակության/կացության ժամկետը կարող է գումարվել:

8. Եթե անդամ պետություններն ունեն 7-րդ պարբերությամբ նախատեսված տարբերակի համար դիմելու հնարավորություն, ԵՄ կապույտ քարտի սեփականատիրոջ կողմից տարբեր անդամ պետություններում բնակության/կացության ժամկետների համակցության վերաբերյալ սույն Հրահանգի 16-րդ հոդվածով սահմանված դրույթները կիրառվում են համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*):

**ԵՃ երկարաժամկետ բնակության/կացության թույլտվությունը՝ ԵՄ կապույտ քարտի սեփականատերերի համար**

1. 2003/109/ԵՃ հրահանգը կիրառվում է սույն Հոդվածով սահմանված շեղումներով:

2. Շեղում կատարելով 2003/109/ԵՃ հրահանգի 4(1) հոդվածից՝ ԵՄ կապույտ քարտի սեփականատիրոջը, որն օգտվել է սույն Հրահանգի 18-րդ հոդվածով նախատեսված հնարավորությունից, բնակության/կացության տեւողության վերաբերյալ պահանջները կատարելու նպատակով թույլատրվում է գումարել տարբեր անդամ պետություններում բնակության/կացության ժամկետները, եթե պահպանվում են հետեւյալ պայմանները՝

ա) Համայնքի տարածքում օրինական բնակության/կացության հնգամյա ժամկետ՝ որպես ԵՄ կապույտ քարտի սեփականատեր, եւ

բ) երկու տարով օրինական եւ շարունակական բնակություն/կացություն՝ որպես ԵՄ կապույտ քարտի սեփականատեր՝ այն անդամ պետությունում համապատասխան դիմումը ներկայացնելուց անմիջապես առաջ, որտեղ ներկայացվել է երկարաժամկետ բնակության/կացության ԵՃ բնակության/կացության թույլտվության դիմումը:

3. Համայնքում օրինական եւ շարունակական բնակության/կացության ժամկետը հաշվարկելու նպատակով եւ շեղում կատարելով 2003/109/ԵՃ հրահանգի 4(3) հոդվածի առաջին ենթապարբերությունից՝ Համայնքի տարածքից բացակայելու ժամկետները չեն ընդհատում սույն Հոդվածի 2(ա) պարբերության մեջ նշված ժամկետը, եթե դրանք ավելի կարճ են, քան 12 հաջորդական ամիսները եւ սույն Հոդվածի 2(ա) պարբերության մեջ նշված ժամկետի ընթացքում չեն գերազանցում ընդհանուր առմամբ 18 ամիսը: Սույն պարբերությունը կիրառվում է նաեւ այն դեպքերում, եթե ԵՄ կապույտ քարտի սեփականատերը չի օգտվել 18-րդ հոդվածով նախատեսված հնարավորությունից:

4. Շեղում կատարելով 2003/109/ԵՃ հրահանգի 9(1)(գ) հոդվածից՝ անդամ պետությունները Համայնքի տարածքից բացակայելու ժամկետը երկարաձգում են մինչեւ 24 հաջորդական ամիսներ տեւողությամբ, որը սույն Հրահանգի 17(2) հոդվածում նշված ծանոթագրությամբ թույլատրվում է ԵՃ երկարաժամկետ բնակության/կացության թույլտվություն ունեցողին եւ նրա ընտանիքի անդամներին, որոնց տրվել է ԵՃ երկարաժամկետ բնակության/կացության կարգավիճակ:

5. 2003/109/ԵՀ հրահանգից կատարված եւ սույն Հոդվածի 3-րդ եւ 4-րդ պարբերություններով սահմանված շեղումները կարող են սահմանափակվել այն դեպքերով, երբ երրորդ երկրի համապատասխան քաղաքացին կարող է ներկայացնել ապացույց այն մասին, որ վարձու կամ ոչ վարձու տնտեսական գործունեություն ծավալելու կամ կամավոր հիմունքներով ծառայություն մատուցելու կամ իր ծագման երկրում սովորելու նպատակով բացակայել է Համայնքի տարածքից:

6. 14(1)(գ) եւ 15-րդ հոդվածները 17(2) հոդվածում նշված ծանոթագրությամբ շարունակում են կիրառվել երկարաժամկետ բնակության/կացության թույլտվություն ունեցողների համար այն բանից հետո, երբ, եթե կիրառելի է, ԵՄ կապույտ քարտ ունեցողը դառնում է ԵՀ երկարաժամկետ բնակիչ:

### *Հոդված 17*

#### **Երկարաժամկետ բնակության/կացության թույլտվությունը**

1. Այն ԵՄ կապույտ քարտի սեփականատերերին, որոնք բավարարում են սույն Հրահանգի 16-րդ հոդվածով սահմանված ԵՄ երկարաժամկետ թույլտվություն ձեռք բերելու պայմանները, տրվում է բնակության/կացության թույլտվություն՝ թիվ 1030/2002 ԵՀ կանոնակարգի 1(2) հոդվածի համաձայն:

2. Սույն Հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված բնակության/կացության թույլտվության մեջ «ծանոթագրություն» վերնագրի տակ անդամ պետությունները գրառում են՝ « ԵՄ կապույտ քարտի նախկին սեփականատեր»:

ԳԼՈՒԽ V

**ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ/ԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

### *Հոդված 18*

**Պայմանները**

1. Որպես ԵՄ կապույտ քարտի սեփականատեր՝ առաջին անդամ պետությունում տասնութ ամիս օրինական բնակությունից/կացությունից հետո համապատասխան անձը եւ նրա ընտանիքի անդամները, բարձր որակավորում պահանջող աշխատանքի նպատակով, կարող են սույն Հոդվածով սահմանված պայմաններով տեղափոխվել այլ անդամ պետություն՝ բացի առաջին անդամ պետությունից:

2. Հնարավորինս շուտ եւ ոչ ուշ, քան երկրորդ անդամ պետություն մուտք գործելուց հետո մեկ ամսվա ընթացքում, ԵՄ կապույտ քարտի սեփականատերը եւ(կամ) նրա գործատուն այդ անդամ պետության իրավասու մարմիններին ներկայացնում են ԵՄ կապույտ քարտ ստանալու դիմում եւ 5-րդ հոդվածով սահմանված պայմանների բավարարումը հավաստող փաստաթղթեր՝ երկրորդ անդամ պետության համար: Ազգային իրավունքի համաձայն՝ երկրորդ անդամ պետությունը կարող է դիմողին աշխատել չթույլատրելու վերաբերյալ որոշում կայացնել, մինչեւ իր իրավասու մարմինների կողմից դիմումի մասին դրական որոշում ընդունելը:

3. Դիմումը կարող է նաեւ ներկայացվել երկրորդ անդամ պետության իրավասու մարմիններին, քանի դեռ ԵՄ կապույտ քարտի սեփականատերը բնակվում է առաջին անդամ պետության տարածքում:

4. 11-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերի համաձայն՝ երկրորդ անդամ պետությունը քննում է դիմումը եւ այդ մասին գրավոր տեղեկացնում դիմողին, իսկ առաջին անդամ պետությունը տեղեկացնում է հետեւյալի վերաբերյալ իր որոշման մասին՝

ա) դիմողին 7-ից 14-րդ հոդվածներով սահմանված պայմանների համաձայն տալ ԵՄ կապույտ քարտ եւ թույլատրել բարձր որակավորում պահանջող աշխատանքի նպատակով բնակվել իր տարածքում, եթե բավարարված են սույն Հոդվածով սահմանված պայմանները.

բ) մերժել ԵՄ կապույտ քարտ տալը եւ պարտավորեցնել դիմողին եւ նրա ընտանիքի անդամներին թողնել իր տարածքը՝ համաձայն ազգային իրավունքով նախատեսված ընթացակարգերի՝ ներառյալ հեռացման ընթացակարգերը, եթե բավարարված չեն սույն Հոդվածով սահմանված պայմանները: Առաջին անդամ պետությունն առանց ձեւակերպումների անմիջապես հետ է ընդունում ԵՄ կապույտ քարտի սեփականատերերին եւ նրա ընտանիքի անդամներին: Սա նաեւ կիրառվում է, եթե դիմումն ուսումնասիրելու ընթացքում լրացել է անդամ պետության կողմից տրված ԵՄ

կապույտ քարտի ժամկետը կամ գրկել են դրանից: 13-րդ հոդվածը կիրառվում է հետընդունումից հետո:

5. Եթե առաջին անդամ պետության կողմից տրված ԵՄ կապույտ քարտի ժամկետը լրանում է ընթացակարգի ընթացքում, անդամ պետությունները կարող են տրամադրել ազգային ժամանակավոր բնակության/կացության թույլտվություն կամ համարժեք թույլտվություններ, որոնք թույլ են տալիս դիմողին շարունակել օրինական հիմունքներով մնալ իր տարածքում մինչև իրավասու մարմինների կողմից դիմումի մասին որոշում ընդունելը:

6. Դիմողը եւ(կամ) իր գործատուն կարող են պատասխանատվության ենթարկվել ԵՄ կապույտ քարտի սեփականատիրոջ եւ նրա ընտանիքի անդամների վերադարձի եւ հետընդունման հետ կապված ծախսերի համար՝ ներառյալ պետական միջոցներով արված ծախսերը՝ 4(բ) պարբերությանը համապատասխան, եթե կիրառելի է:

7. Սույն Հոդվածը կիրառելիս անդամ պետությունները կարող են շարունակել կիրառել 6-րդ հոդվածում նշված ընդունման թվերը:

8. Երկրորդ անգամից հետո, երբ ԵՄ կապույտ քարտի սեփականատերը եւ, հարկ եղած դեպքում, նրա ընտանիքի անդամները օգտվում են սույն գլխում նշված պայմաններով անդամ պետություն տեղափոխվելու հնարավորությունից, «առաջին անդամ պետություն» ասելով պետք է հասկանալ՝ անդամ պետություններ, որտեղից համապատասխան անձը տեղափոխվում է, եւ «երկրորդ անդամ պետություն»՝ անդամ պետություն, որտեղ նա դիմում է բնակվելու համար:

### *Հոդված 19*

#### **Երկրորդ անդամ պետությունում բնակությունը/կացությունը՝ ընտանիքի անդամների համար**

1. Երբ ԵՄ կապույտ քարտի սեփականատերը, 18-րդ հոդվածի համաձայն, տեղափոխվում է երկրորդ անդամ պետություն՝ եւ երբ ընտանիքն արդեն առաջին անդամ պետությունում է, ապա նրա ընտանիքի անդամներն իրավունք ունեն ուղեկցել կամ միանալնրան:

2. Երկրորդ անդամ պետություն մուտք գործելուց հետո՝ ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, համապատասխան ընտանիքի անդամները կամ ԵՄ կապույտ քարտի սեփականատերը, ազգային իրավունքի համաձայն, այդ անդամ պետության իրավասու մարմիններին որպես

ընտանիքի անդամ ներկայացնում են դիմումբնակության/կացության թույլտվություն ստանալու համար:

Այն դեպքերում, երբ անդամ պետությունների կողմից ընտանիքի անդամներին տրված բնակության/կացության թույլտվության ժամկետը լրանում է ընթացակարգի ընթացքում կամ դրա սեփականատիրոջը այլևս իրավունք չի տալիս օրինական հիմունքներով բնակվել երկրորդ անդամ պետության տարածքում, անդամ պետությունները այդ անձին թույլատրում են մնալ իրենց տարածքում, եթե անհրաժեշտ է՝ ազգային ժամանակավոր բնակության/կացության թույլտվություններ կամ համարժեք լիազորություններ տալով, որոնք դիմողին թույլատրում են ԵՄ կապույտ քարտի սեփականատիրոջ հետ շարունակել օրինական հիմունքներով մնալ իրենց տարածքում, մինչև երկրորդ անդամ պետության իրավասու մարմինների կողմից դիմումի մասին որոշում ընդունելը:

3. Երկրորդ անդամ պետությունը կարող է պահանջել, որ համապատասխան անդամ պետությունները ներկայացնեն բնակության/կացության թույլտվություն ստանալու իրենց դիմումները՝

- ա) անդամ պետությունում նրանց բնակության/կացության թույլտվությունը եւ վավերական ճամփորդական փաստաթուղթը կամ դրանց հաստատված պատճենները, ինչպես նաեւ, հարկ եղած դեպքում, վիզան.
- բ) ապացույց, որ նրանք առաջին պետությունում բնակվել են որպես ԵՄ կապույտ քարտի սեփականատիրոջ ընտանիքի անդամներ.
- գ) ապացույց, որ նրանք երկրորդ անդամ պետությունում ունեն առողջության ապահովագրություն, կամ ԵՄ կապույտ քարտի սեփականատերը նրանց համար ունի այդպիսի առողջության ապահովագրություն:

4. Երկրորդ անդամ պետությունը կարող է պահանջել, որ ԵՄ կապույտ քարտի սեփականատերը տրամադրի ապացույց այն մասին, որ նա՝

- ա) ապահովված է նույն տարածաշրջանում համեմատելի ընտանիքների համար նորմալ համարվող բնակարանով եւ որը համապատասխան անդամ պետությունում պահպանում է ընդհանուր առողջության եւ ապահովության չափանիշները.

բ) ունի կայուն ու կանոնավոր միջոցներ, որոնք բավարար են իր եւ իր ընտանիքի անդամների կենսագործունեությունն ապահովելու համար՝ առանց համապատասխան անդամ պետության սոցիալական աջակցությունից օգտվելու: Անդամ պետությունը գնահատում է այդ միջոցները՝ հաշվի առնելով դրանց բնույթն ու կանոնավորությունը եւ կարող է հաշվի առնել ազգային նվազագույն աշխատավարձերի եւ թոշակների մակարդակը, ինչպես նաեւ ընտանիքի անդամների թիվը:

5. 15-րդ հոդվածում նշված շեղումները շարունակում են կիրառվել համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*):

6. Եթե ընտանիքը արդեն չի կազմվել անդամ պետությունում, ապա կիրառվում է 15-րդ հոդվածը:

#### ԳԼՈՒԽ VI

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

#### *Հոդված 20*

#### **Կիրարկվող միջոցները**

1. Անդամ պետությունները Հանձնաժողովին եւ այլ անդամ պետություններին ներկայացնում են, թե արդյոք օրենսդրական կամ կարգավորող միջոցները սահմանված են 6-րդ, 8(2) եւ 18(6) հոդվածներին համապատասխան:

Այն անդամ պետությունները, որոնք օգտվում են 8(4) հոդվածի դրույթներից, Հանձնաժողովին եւ այլ անդամ պետություններին ներկայացնում են պատշաճ կերպով հիմնավորված որոշում՝ նշելով համապատասխան երկրներն ու ոլորտները:

2. Տարեկան, իսկ առաջին անգամ՝ ոչ ուշ, քան 2013 թվականի հունիսի 19-ը, անդամ պետությունները, համաձայն թիվ 862/2007 (ԵՀ) կանոնակարգի, Հանձնաժողովին ներկայացնում են երրորդ երկրի այն քաղաքացիների թիվը, որոնց տրամադրվել է ԵՄ կապույտ քարտ, հնարավորության դեպքում՝ երրորդ երկրի այն քաղաքացիների թիվը, որոնց նախորդ օրացույցային տարվա ընթացքում զրկվել են ԵՄ կապույտ քարտից կամ երկարաձգել դրա

ժամկետը՝ նշելով նրանց քաղաքացիությունը եւ, հնարավորության դեպքում, նրանց աշխատանքը: Ընդունված ընտանիքների մասին վիճակագրությունը ներկայացվում է նույն ձևով, բացի նրանց աշխատանքի վերաբերյալ տեղեկատվությունից: Բացի դրանից՝ 18-րդ, 19-րդ եւ 20-րդ հոդվածների համաձայն ընդունված ԵՄ կապույտ քարտի սեփականատերերի եւ նրանց ընտանիքի անդամների վերաբերյալ տրամադրված տեղեկատվության մեջ, հնարավորության դեպքում, նշվում է նախորդ բնակության/կացության անդամ պետությունը:

3. 5(3) եւ, անհրաժեշտության դեպքում, 5(5) հոդվածի կիրարկման նպատակով՝ հղում է կատարվում Հանձնաժողովի (Եվրոստատ) տվյալներին եւ, անհրաժեշտության դեպքում, ազգային տվյալներին:

### *Հոդված 21*

#### **Հաշվետվությունները**

Ամեն երեք տարին մեկ, իսկ առաջին անգամ՝ ոչ ուշ, քան 2014 թվականի հունիսի 19-ը, Հանձնաժողովը անդամ պետություններում Հրահանգի դիմումի, մասնավորապես, 3(4), 5-րդ եւ 18-րդ հոդվածների ազդեցության գնահատման մասին հաշվետվություն է ներկայացնում Եվրոպական պառլամենտին եւ Համայնքին, եւ առաջարկում որոշակի անհրաժեշտ փոփոխություններ:

Հանձնաժողովը հատկապես գնահատում է 5-րդ հոդվածով սահմանված աշխատավարձի սահմանի եւ այդ Հոդվածով նախատեսված շեղումների կիրառումը, այդ թվում, մասնավորապես, հաշվի առնելով անդամ պետություններում առկա տնտեսական, ոլորտային եւ աշխարհագրական իրավիճակների բազմազանությունը:

### *Հոդված 22*

#### **Համակարգողները**

1. Անդամ պետությունները նշանակում են համակարգողներ, որոնք պատասխանատու են 16-րդ, 18-րդ եւ 20-րդ հոդվածներում նշված տեղեկատվությունը ստանալու եւ փոխանցելու համար:

2. Անդամ պետությունները անհրաժեշտ աջակցություն են ցույց տալիս 1-ին պարբերության մեջ նշված տեղեկատվության եւ փաստաթղթերի փոխանակման գործում:

#### *Հոդված 23*

#### **Փոխատեղումը**

1. Անդամ պետությունները սույն Հրահանգին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը գործողության մեջ են դնում մինչեւ 2011 թվականի հունիսի 19-ը: Նրանք անմիջապես այդ մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ դրույթները, դրանք պետք է պարունակեն հղում սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Անդամ պետությունները որոշում են, թե ինչպես պետք է կատարվեն այդպիսի հղումները:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

#### *Հոդված 24*

#### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակման հաջորդ օրը:

#### *Հոդված 25*

#### **Հասցեատերերը**

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին՝ «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրի համաձայն:

Կատարված է Բրյուսելում, 2009 թվականի մայիսի 25-ին

Խորհրդի կողմից

Նախագահ՝

Յ. Սեբեաստա